Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

« 12 » Փետրվար 2019թ. **ք. Վանաձոր**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Դ.Մատինյանս, ուսումնասիրելով 06.02.2019թ.-ին վերսկսված թիվ 02809255 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01.12.2016թ.-ին տրված թիվ ԼԴ 1/0368/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է՝ Անահիտ Լևոնի Գրիգորյանից հօգուտ “Յունիբանկ” ԲԲԸ-ի բռնագանձել 551.802 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 66 հոդվածի և 67-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ բռնագանձել բռնագանձման ենթակա գումարի 5%, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների կատարման ընթացքում արգելանք է կիրառվել Անահիտ Լևոնի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ, Լոռու մարզ, գ.Ձորագետ՝ թիվ 06-065-019-009 ծածկագրով բնակելի տան և թիվ 06-065-019-012-017 ծածկագրով հողի և օժանդակ շինության նկատմամբ, որոնք փորձագիտական եզրակացության համաձայն գնահատվել են ընդհանուր 1.507.000 ՀՀ դրամ, որոնց հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացման մեկնարկային գները չեն բավարարում կատարողական թերթի պահանջների կատարմանը: Անահիտ Լևոնի Գրիգորյանին պատկանող բռնագանձման ենթակա այլ գույք, դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, և ի հայտ են եկել սնանկության հատկանիշներ:

Պահանջատեր “Յունիբանկ” ԲԲԸ-ն գրավոր տեղեկացրել է, որ պարտապանի պարտավորության չափը 16.10.2018թ.-ի դրությամբ կազմում է 3.843.252 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 37-րդ հոդվածի 8-րդ կետով և 39 հոդվածներով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել 06.02.2019թ.-ին վերսկսված թիվ 02809255 կատարողական վարույթը՝ 60-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ հարկադիր կատարող՝ ***Դ. Մարինյան***